ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-20-10/11-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 05.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն.Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Ամիրջանովի, ով գործում է Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **10.01.2020թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-20-10/11-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ծառայությունը ներառված է ՀՀ կառավարության 2020թ.-ի պետական բյուջեով հաստատված պետության կարիքների համար գնումների պլանում 17.02.2020թ. Ծանուցում N 5-ՊՆ փոփոխությունների և /կամ/ լրացումների մեջ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների** գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան **վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ** (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է **14 817 600 (տասնչորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Կոմիտաս 35
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Արաբկիր մ/մ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 24712000013150000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00069839
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն.ՅՈԼՉՅԱՆ	Հ.ԱՄԻՐՋԱՆՈՎ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/11-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության մատուցման վայրը, հաճախությունը և տեխնիկական բնութագիր	Գումարը, դրամ
Կատարողի կողմից պետք է յուրաքանչյուր ամիս՝ 15 օրը մեկ անգամ, իրականացվի ՀՀ ՊՆ վարչական համալիրում (ք. Երևան Բագրևանդի 5) տեղակայված թվով 21 «KONE» ֆիրմայի վերելակների տեխնիկական սպասարկում, ընդ որում սպասարկումը ներառում է ներքոհիշյալ ծառայությունները, որոնք յուրաքանչյուր ամիս՝ ըստ վերը նշված հաճախության, ենթակա են կատարման:		
1	Վերելակի վերամբարձ կարապիկի դիտարկում, կարգաբերում:	1530
2	Արգելակների ստուգում (զսպանակների ամբողջություն, հոդակապերի միացում, լծակները, մեջդիրների մաշվածության աստիճանը):	2700
3	Փոշուց և աղտոտվածությունից էլ.սարքավորումների դիտարկում և մաքրում, կարգաբերում:	1040
4	Էլ. թողարկիչների և ռելեների կոնտակտորային համակարգի ստուգում:	2050
5	Աշխատանքի ընթացքում կարապիկի և էլ. սարքավորումների ստուգում:	1600
6	Հորանային դռների աշխատեցման մեխանիկական համակարգի և նրանց փականների ստուգում, կարգաբերում:	2050
7	Հորանային դռների համակարգի մեջ մտնող էլեկտրական վերջնական անջատիչների ստուգում:	970
8	Խցիկի դռների մեխանիկական և էլեկտրական համակարգի ստուգում, կարգաբերում:	650
9	Խցիկի և հորանի դռների աշխատանքի ստուգում միավորված ռեժիմում և կարգաբերում:	870
10	Տվիչների և դրոշակների ստուգում միավորված ռեժիմում՝ վերելակի ընթացքի ժամանակ:	1490
11	Խցիկի դռների դիտարկում աշխատանքի ընթացքում և կարգաբերում:	800
12	Վերելակի հորանի էլ. լուսավորության ստուգում և կապերի փոխարինում:	1640
13	Մետաղական ճոպանների միացման համակարգի ստուգում և կարգաբերում:	2310
14	Վերելակի աշխատանքի ստուգում հարկային կանչերի և խցիկի ներսի կոճակներով և կարգաբերում:	1060
15	Խցիկի աշխատանքի դիտարկում և անհրաժեշտության դեպքում մարտկոցների փոխարինում (մարտկոցները հատկացվում են պատվիրատուի կողմից):	1200
16	Մեքենայական սրահի բոլոր էլ. սարքավորումների դիտարկում, շարժական սարքավորումների լարերի միացման ստուգում և կարգաբերում:	2500
17	Հիմական ճոպանատար անիվի առվակների մաշվածության ստուգում:	560
18	Արագության սահմանափակման գլխիկի անիվի ճոպանի առվակի մաշվածության ստուգում:	880
19	Բոլոր ճոպանների մաշվածության ստուգում:	2030
20	Խցիկի և հակակշռի սահքի ներդիրների մաշվածության ստուգում:	1880
21	Խցիկի և հակակշռի ուղղորդների ամրացվածության ստուգում և կարգաբերում:	1100
22	Բոլոր ճոպանային և հեղուսային միացումների դիտարկում և կարգաբերում:	2670
23	Բարձրացնող ճոպանները վթարային վիճակում գտնվելու ժամանակ անհրաժեշտ անվտանգության սարքավորումների աշխատանքի ստուգում, կարգաբերում:	3460
24	Հորանում գտնվող էլ. լարերի վիճակի ստուգում:	650
25	Պողպատյա ճոպանների ամրացման համակարգի մեջ մտնող զսպանակների ամբողջականության ստուգում և բալանսի կարգավորում:	1910
26	Խցիկի անկման որսիչների դիտարկում և մասնակի ստուգում:	1000
27	Արագության սահմանափակման ճոպանի ծգման ստորահորանում գտնվող սարքի ստուգում և կարգաբերում:	1490
28	Հորանի սարքավորումների վրա առաջացած աղբի հեռացում:	640
29	Խցիկի և հակակշռի ուղղորդների յուղման համակարգի դիտարկում և կարգաբերում:	670
30	Խցիկի առաջին և վերջին հարկերում գտնվելու խախտվածության վթարային անջատիչի ստուգում և կարգաբերում:	1650
31	Վերելակների սարքավորումների մեջ գտնվող բոլոր առանցքակալների դիտարկում և կարգաբերում:	4670
32	Խցիկի անկման որսիչների աշխատանքի ստուգում, կարգաբերում:	3510
33	Խցիկի գերբեռնվածության համակարգի աշխատանքի ստուգում, կարգաբերում:	5020
34	Ռոլիկների առանցքակալների ստուգում, յուղում, կարգաբերում:	550
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	58800

Հ/հ	CPV	Ծառայության անվանումը	Վերելակների քանակը	1 վերելակի սպասարկման ամսեկան գումարը, դրամ	Թվով 21 վերելակների համար ամսեկան գումարը, դրամ	Մեկ տարվա պլանավորված գինը, դրամ	Ծառայության մատուցման ժամկետը 2020թ.
1	2		3	4	5 (5=3*4)	6 (6=5*12ամիս)	7
1	50751100/501	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ	21	58 800	1 234 800	14 817 600	2020թ.-ի 1-4-րդ եռամսյակներ. բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.

Ծանոթագրություն. **Պատվիրատուն չի տրամադրում էլեկտրոնային կառավարման համակարգի մուտքի բանալիներ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՅՈՒՍՈՒՖՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ
Տնօրեն

Հ. ԱՄԻՐՋԱՆՈՎ

Հավելված N 2
N ԳՀՇՁԲ-20-10/11-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25-ը
1	50751100/501	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ	3 704 400	3 704 400	4 939 200	6 174 000	7 408 800	7 408 800	9 878 400	11 113 200	13 248 000	14 817 600

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն.ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ռ.Դ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴԱՊԸ
Տնօրեն

Հ. ԱՄԻՐՋԱՆՈՎ